ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի մարտի 24-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ԷԱՃԱՊՁԲ-2023/16-11-ԵՊԲՀ»**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների, բժշկական նշանակության ապրանքների և գործիքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2023/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2023 թվականի մարտի 23-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2023 թվականի մարտի 24-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Հարգելի գործընկերներ, Խնդրում եմ պարզաբանել, արդյոք ԷԱՃԱՊՁԲ-2023/16-11-ԵՊԲՀ ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրի 56 և 57-րդ չափաբաժինների տեխնիկական պարամետրերով ներքնակներ գոյություն ունեն, և արդյոք կան մեկից ավելի հնարավոր մասնակիցներ, ովքեր կարող են նշված անվանումները մատակարարել հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ճշգրտությամբ, թե առկա է վրիպակ. մասնավորապես N 56-րդ չափաբաժնի (Հակապառկելախոցային ներքնակ/1) տեխնիկական բնութագրում նշված է պահանջ, որ ներքնակը Նախատեսված է 160 կգ և ավել քաշ ունեցող, մինչև 3 ամիս անկողնային ռեժիմ պահվող հիվանդների համար: Այնինչ, որոնումների արդյունքում այս պարամետրերով ներքնակները լինում են առավելագույնը 135կգ քաշի համար, այլ ոչ 160կգ և ավել քաշ ունեցողի: N 57-րդ չափաբաժնի (Հակապառկելախոցային ներքնակ/2) տեխնիկական բնութագրում նշված է պահանջ. • Ընդհանուր չափսերը՝ 200 x 90 x 21 սմ (±5%) • Բեռնվածությունը՝ ոչ պակաս, քան՝ 190 կգ Այնինչ, որոնումների արդյունքում գտնվել է ներքնակ 21սմ հաստությամբ, բայց անգամ այդ եզակի դեպքում՝ առավելագույն քաշը տրված է 160ից 180կգ, այլ ոչ 190 կգ:

Պարզաբանում N 1: Հարգելի հնարավոր մասնակից, 56-րդ և 57-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում որևէ վրիպակ առկա չէ: Տեխնիկական բնութագրերը գրվել են տարբեր արտադրողների ապրանքների ուսումնասիրության արդյունքում, իսկ վերոհիշյալ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի նվազագույն պահանջներին համապատասխան ներքնակներ չներկայացվելու պարագայում այդ չափաբաժինները կհայտարարվեն չկայացած: Առաջարկվող ապրանքների համարժեքությունը գնահատվելու է հրավերով սահմանված կարգով, այն է՝ տեխնիկական բնութագիրը, ապրանքնային նշանը և արտադրող կազմակերպության անվանումը պետք է համապատասխանեն միմյանց և հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջներին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տատյանա Միրզոյանին:
Հեռախոս՝ 091 83 72 15
Էլ. փոստ՝ procurement.ysmu2@gmail.com

«ԷԱՃԱՊՁԲ-2023/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

Նախագահ՝ _____ Ա.Հակոբյան

Անդամներ՝ _____ Հ.Սարգսյան

_____ Կ.Մկրտչյան

ОБЪЯВЛЕНИЕ
о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии
№ 2 от 24-го марта 2023 года
и опубликовывается
в соответствии со статьей 29 Закона Республики Армения "О закупках"

Код процедуры **«ԷԱՃԱՊՁԲ-2023/16-11-ԵՊԲՀ»**

Оценочная комиссия процедуры закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2023/16-11-ԵՊԲՀ», организованной с целью приобретения медицинского оборудования, товаров медицинского назначения и медицинских инструментов для нужд фонда “Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци”, ниже представляет запрос, полученные 23-го марта 2023 года, и предоставленные 24-го марта 2023 года по ним разъяснения относительно приглашения по тому же коду:

Вопрос N 1: Уважаемые партнеры, уточните, пожалуйста, есть ли матрасы с техническими параметрами для лотов 56 и 57 технической характеристики конкурса по коду ԷԱՃԱՊՁԲ-2023/16-11-ԵՊԲՀ, и есть ли более одного возможных участников, которые могут поставить упомянутые товары в технической спецификации приглашения с указанной точностью, нет ли ошибки. в частности, в технических условиях лота N 56 (Противопролежневый матрас/1) указано, что матрас предназначен для пациентов с массой тела 160 кг и более, находящихся в постели до 3-х месяцев. Однако в результате поисков матрасы с такими параметрами доступны для максимального веса 135 кг, а не для человека весом 160 кг и более. В технических условиях части 57 (Противопролежневый матрас/2) есть требование: • Габаритные размеры: 200 x 90 x 21 см (±5%) • Грузоподъемность: не менее: 190 кг Однако в результате поисков был найден матрас толщиной 21 см, но даже в этом единственном случаи, максимальный вес указан от 160 до 180 кг, а не 190 кг.

Разъяснение N 1: Уважаемый Потенциальный участник, в технических характеристиках лотов 56 и 57 ошибки нет. Технические характеристики были написаны в результате изучения продукции разных производителей, а в случае отсутствия матрасов, отвечающих минимальным требованиям технических характеристик вышеупомянутых лотов эти лоты будут объявлены несостоявшимися. Соответствие предлагаемых товаров будет оцениваться способом, указанным в приглашении, то есть техническая спецификация, товарный знак и наименование производителя должны соответствовать друг другу и минимальным требованиям технической спецификации, указанным в приглашении.

Для получения дополнительной информации относительно данного приглашения можете обратиться к секретарю Татьяне Мирзоян.
Телефон: 091 83 72 15
Эл. почта: procurement.ysmu2@gmail.com

Оценочная комиссия процедуры закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2023/16-11-ԵՊԲՀ»

Председатель _____ А.Акопян

Члены _____ А.Саргсян

_____ К.Мкртчян